

# ՊԱՀՊԱՆԵԼ ԱԶԱՏԱՏԵԼՉ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Posted on March 14, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



**Անցնող քսան եւ հինգ տարիներու ընթացքին հարիւրաւոր լիբանանահայեր նուիրուեցան Արցախի**  
**ազատագրման, պահպանման, այնուհետեւ անոր զարգացման ազգաշինարար յոյժ կարելոր եւ**  
**սրբազան գործին: Ստորեւ կը ներկայացնենք այս ազգանուէր անհատներէն փունջ մը իրենց**  
**խօսքերուն ընդմէջէն՝ յապաւումներով, կարելիութեան սամաններուն մէջ հարազատ մնալով իրենց**  
**արտայայտութիւններուն: Մեր ցանկութիւնն ու յոյսն է որ անոնց նուիրումը վարակիչ կը դառնայ՝**  
**ընդգրկելով յատկապէս նորանոր երիտասարդներ:**

Համօ Մոսկոֆեան, Պէյրութ, 11 Մարտ 2014

### **ԲԵՆԻԱՄԻՆ ՊԶԱՔՃԵԱՆ**

- Բոլորին ծանօթ է Լիբանանի հայութեան կարելոր ներդրումը արցախեան տագնապի եւ ազատագրական շարժման առաջին օրերէն իսկ: Լիբանանի մէջ ստեղծուեցաւ Արցախի օժանդակութեան մարմին մը, որ պատերազմի հետեւանքով յառաջ եկած կարիքները սկսաւ հոգալ: Դեղորայք, հագուստեղէն, ուսելիք, իր կարողութեան սահմաններուն մէջ իր օժանդակութիւնը բերաւ, սակայն, երբ զինադադարը եղաւ եւ պետական վերակառուցման գործընթացը սկսաւ, այդ տրամաբանութիւնը պետք է փոխուէր: Այդ արդէն օժանդակութիւն չէր այլեւս, այլ Արցախի վերաբնակեցումն ու վերաշինութիւնն էր: Ճիշդ անոր համար մարմինն անունը փոխուեցաւ եւ 2006 թուականէն ի վեր կը կոչուի «Արցախ Ֆոնտ»: Այսինքն՝ վերաշինութիւն եւ վերաբնակեցում, ուր ոչ միայն Լիբանանը կ'օժանդակէ, այլեւ մասնակից կը դառնայ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կայունացման մեծ գործին:

**Անցնող քսան եւ հինգ տարիներու ընթացքին հարիւրաւոր լիբանանահայեր նուիրուեցան Արցախի**  
**ազատագրման, պահպանման, այնուհետեւ անոր զարգացման ազգաշինարար յոյժ կարելոր եւ**  
**սրբազան գործին: Ստորեւ կը ներկայացնենք այս ազգանուէր անհատներէն փունջ մը իրենց**  
**խօսքերուն ընդմէջէն՝ յապաւումներով, կարելիութեան սամաններուն մէջ հարազատ մնալով իրենց**  
**արտայայտութիւններուն: Մեր ցանկութիւնն ու յոյսն է որ անոնց նուիրումը վարակիչ կը դառնայ՝**  
**ընդգրկելով յատկապէս նորանոր երիտասարդներ:**

Համօ Մոսկոֆեան, Պէյրութ, 11 Մարտ 2014

### **ԲԵՆԻԱՄԻՆ ՊԶԱՔՃԵԱՆ**

- Բոլորին ծանօթ է Լիբանանի հայութեան կարելոր ներդրումը արցախեան տագնապի եւ ազատագրական շարժման առաջին օրերէն իսկ: Լիբանանի մէջ ստեղծուեցաւ Արցախի օժանդակութեան մարմին մը, որ պատերազմի հետեւանքով յառաջ եկած կարիքները սկսաւ հոգալ: Դեղորայք, հագուստեղէն, ուսելիք, իր կարողութեան սահմաններուն մէջ իր օժանդակութիւնը բերաւ, սակայն, երբ զինադադարը եղաւ եւ պետական վերակառուցման գործընթացը սկսաւ, այդ տրամաբանութիւնը պետք է փոխուէր: Այդ արդէն օժանդակութիւն չէր այլեւս, այլ Արցախի վերաբնակեցումն ու վերաշինութիւնն էր: Ճիշդ անոր համար մարմինն անունը փոխուեցաւ եւ 2006 թուականէն ի վեր կը կոչուի «Արցախ Ֆոնտ»: Այսինքն՝ վերաշինութիւն եւ վերաբնակեցում, ուր ոչ միայն Լիբանանը կ'օժանդակէ, այլեւ մասնակից կը դառնայ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կայունացման մեծ գործին:







խաղաղութիւնն ապահովելը, յաղթանակով աւարտի:


**ՄԱՐԱԼ ՄԱՀՍԵՐԵՃԵԱՆ**

- 2010-Էն ի վեր «Արցախ Ֆոնտ»ի կազմին մէջ եմ մասնակցելով բուժ-օգնութեան աշխատանքներուն: Քաշաթաղի 52 համայնքներուն մէջ նախնական բուժ-օգնութեան սարքեր տրամադրեցինք: Ապա, կենցաղային եւ առողջապահական ծրագիրներու ծիրին մէջ դաստիարակչական աշխատանքներ իրագործեցինք:

2012-13-Էն ի վեր, Կովսական աւանին մէջ Օգոստոս ամսուն տեղի կ'ունենայ Կանանց Համագործակցականի ցուցահանդէսը, ուր կը ցուցադրուին ձեռային աշխատանքներ, որոնք Լիբանանի մէջ ստեղծուած են: Կանայք իրենց ամուսիններուն նիւթապէս նեցուկ կանգնած են, ապահովելու համար իրենց օրապահիկը: Այսպիսի օրինակներ կան Հայաստանի տարբեր քաղաքներու մէջ, անոր համար ալ առաջին անգամ իրագործուեցաւ Կովսականի մէջ: Հայը հայ է ուր որ ալ ըլլայ, եթէ եկած է Սուրիայէն կամ Հայաստանէն եւ երբեք տարբերութիւն չենք դներ ոեւէ Կովսականցիի միջեւ:

 **Կովսականի վերանորոգուած հիւանդանոցը**

**ԴՐՕ ՄԱՐԸԵԱՆ**

- 2006 թուականէն ասդին, «Արցախ Ֆոնտ»ը ծրագիր մը ունէր. նպատակը այն էր որ իւրաքանչիւր 3-րդ զաւակը ունեցող ընտանիքին կով մը տրամադրուի: Այսինքն՝ զաւակը որ կը ծնի, իր հետ կը  ծնի նաեւ ապրելու յոյսը:

Իմ աշխատանքս այն է, որ որ տեսակցիմ այն ընտանիքներուն հետ, որոնք իրենց 3-րդ նորածինը ունենալէ ետք դիմում ներկայացուցած էին որ անոնց կով մը նուիրենք, որպէսզի արտադրուած կաթն ու կաթնամթերքը նորածինին սնունդ դառնայ: Անոնք տեղական կովեր են, վարժուած տեղական պայմաններուն: Անոնց վաճառքի թղթաբանութիւնը մենք կը կատարենք, պետատան եւ օրինական ճամբով:

